

է հեղանիւթներու լուծիչ, որովհետեւ հեղանիւթները մինչև որ ջերմածին չըլլայ՝ գոլորշի չեն դառնար : Բայց ասով չենք ուզեր ըսել թէ ջերմածինը միայն հեղանիւթներու լուծիչն է . շատ հաստատուն մարմիններ ալ ջերմածնով կը լուծուին . ինչպէս մետաղներն որ ջրին մէջ չեն լուծուիր, սաստիկ տաքութեամբ կը լուծուին, և նոյն կը հալին կամ հեղանիւթ կը դառնան, ետքը անգայտանալով աներեւոյթ գոլորշի կ'ըլլան . և այս պատճառաւ է որ հայերէն չորհալի կ'ըսուին . շատ մարմին ալ կան, որ թէ՛ ջրով և թէ՛ ջերմածնով կը լուծուին . ասանկ են աղային և խժային մարմինք, և այլն :

Բայտ ալ գիտնալու է՝ որ տաք ջուրը պաղ ջրէն աւելի շուտ կը լուծէ մարմինը . և ասանկով կրնանք սեպել՝ որ ջերմածինն ալ կերպով մը ջրով լուծուած մարմնոց վրայ ազդեցութիւն կ'ընէ . վասն զի որչափ որ ալ պակաս ըլլայ ջրին տաքութեան աստիճանը, միշտ մէջը աւելի կամ պակաս ջերմածին կը գրտնուի : Բայտ ատենը ջրին ու ջերմածնին ազդեցութիւնը կը միանայ մարմինները լուծանելու . իսկ լուծմանը դիւրութիւնը կամ դժուարութիւնը կը կախուի մարմնոց մասնրկանց իրարու հետ ունեցած ձգողութեան աստիճանէն, որ մարմինը լուծանելու համար յաղթել պէտք է . և մարմնոյն մասնրկանցը շարքէն, որ աւելի կամ պակաս յարմարութիւն կ'ունենան իրարմէ բաժնուելու և թող տալու որ մէջերնին լուծիչ մարմինը թափանցէ :

Չրէն զատ մէկալ հեղանիւթներու լուծիչ կարողութիւնը՝ իրենց բնութեանը յարմար, և ըստ բնութեան այն գոյացութեանցը, որոնց վրայ որ ազդուութիւն կ'ընեն, շատ կը զանազանուի : Բայտ լուծիչ գոյացութեանց մեծ մասը ջրէն էականապէս տարբեր են, այն պատճառաւ՝ որ չէ թէ միայն պարզապէս ածուցողութիւն մասնրկուներ իրարմէ կը բաժնեն, հապա բնալուծական ձգողութեամբ անոնց բաղադրիչ սկզբուներ կը քակեն, և անանկով իրապէս Կարբադուրութիւն մը կ'ըլլայ : Թէ որ հոս տեղն ըլլար բնալուծութեան վրայ ալ խօսելու, այս գործողութեանց վրայ ալ կը խօսէինք, որ քիչ մը աւելի դժուարիմանալի են . բայց այս տեղս խօսեցանք միայն ջրին ու ջերմածնին լուծիչ կարողութեանը վրայ :

Շատ գոյացութիւններ կան, որ ջրին հետ որ խառնուին՝ ջուրը կը պղտորի ու կը խտանայ . ասանկ որ ըլլայ, լուծումն չըլլար, հապա միայն խառնուող մը : Լուծման և խառնուողի տարբերութիւնը իմանալու համար բաւական է որ դիտենք թէ ինչ կ'ըլլայ երբոր գաւաթ մը ջրի մէջ քիչ մը սովորական աղ ձգենք, և ուրիշ գաւաթի մը մէջ ալ քիչ մը փոշի դարձած կիր . այս երկու գոյացութիւնն ալ ձերմակ են, բայց իրենց ջրին վրայ բրած ազդեցութիւնը բոլորովին տարբեր : Երբ բոլորովին կ'աներևութանայ, և ջուրը պայծառ կը թողու . իսկ կրին փոշին ջուրը կաթի պէս դիմահար հեղանիւթ մը կը դարձնէ :

Անցեալ ամսուսն դրոշմ կեղծագրութիւնն է

Ոչինչ—մարդ կայ ի նսէ—մեծ ութ—իւն

Ոչինչ մարդկայինս է մեծութիւն

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ